

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ	2
2 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	2
3 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ.....	3
4 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	4
5 ՀԱՇՎԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ, ՄԱՐՈՒՄԸ, ՓՈԽԱՐԿՈՒՄԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ.....	7
6 ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ.....	10
7 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
8 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....	12
9 ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ.....	12
10 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ	13
11 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ	13
12 ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	14
13 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	14
14 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ	15

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն հրապարակային պայմանագիրը սահմանում է ԹԵԼ-ՍԵԼ վճարահաշվարկային համակարգում էլեկտրոնային վճարային միջոցների օգտագործման պայմանները և համապատասխան ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի հանդիսանում է «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) կողմից հայտարարված պաշտոնական գրավոր հրապարակային օֆերտա «այսուհետ՝ Պայմանագիր, ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ԹԵԼՍԵԼ վճարահաշվարկային համակարգում (այսուհետ՝ Համակարգ) ծառայությունների մատուցմանը:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Այնքանով, որքանով համատեքստից այլ բան չի բխում, Պայմանագրում օգտագործվող հետևյալ բառերն և արտահայտությունները ունեն հետևյալ նշանակությունը.

Էլեկտրոնային փող՝ «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեքն է, որը՝

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը հավասար է թողարկված էլեկտրոնային փողի արժեքին (1 ՀՀ դրամը հավասար է «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ կողմից թողարկված 1 միավոր էլեկտրոնային փողի),
- ընդունվում է որպես վճարամիջոց «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ -ից տարբերվող այլ անձանց կողմից,
- շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է:

Էլեկտրոնային փող թողարկող (Թողարկող)՝ «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է էլեկտրոնային փողերի թողարկում՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն,

Օգտագործող՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն ստացել է իրավունք Թողարկողի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների համաձայն իր կողմից ձեռքբերված էլեկտրոնային փողը օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում,

Հաշվառման հաշիվ՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտագործողի նկատմամբ Թողարկողի դրամական պարտավորության հաշվառման վերաբերյալ գրառումների ամբողջություն,

Վերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը հնարավոր է վերալիցքավորել (ավելացնել),

Մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարային էլեկտրոնային արժեք), որը հնարավոր չէ վերալիցքավորել,

Հաշվին մուտք գործել – Օգտագործողի կողմից իր ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ հաշվառման հաշվին մուտք գործելու (լոգին լինելու) գործընթաց:

Աուտենտիֆիկացիա – Օգտագործողի տվյալների (օգտատիրոջ անուն և գաղտնաբառ) վավերականության ստուգում:

Վճարում – Օգտագործողի կողմից իր ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ տրված վճարման կարգադրություն, որի արդյունքում Թողարկողի կողմից կատարվում է Օգտագործողի հաշվառման հաշվում առկա էլեկտրոնային փողի նվազեցում և փոխանցում շահառուին:

Մարում – Հաշվառման հաշվից էլեկտրոնային փողի դուրսբերում/կանխիկացում:

Համալրում – Հաշվառման Հաշվին Թողարկողի կողմից սահմանված եղանակներով գումարի մուտքագրում և էլեկտրոնային փողի մնացորդի ավելացում

Մնացորդ – Օգտագործողի հաշվառման հաշվին էլեկտրոնային փողի մնացորդ:

Սպասարկման կետ-Թողարկողի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր:

Տերմինալ՝ էլեկտրատեխնիկական ինքնասպասարկման սարք, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումն առանց Ընկերության աշխատակցի միջամտության,

Կանոնակարգ՝ Թողարկողի կողմից հաստատված «էլեկտրոնային փող թողարկելու գործունեության» կանոնակարգ:

Գործակալ՝ Թողարկողից տարբերվող ֆինանսական կազմակերպություն, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն իրականացնում է էլեկտրոնային փողի մարում և(կամ) Օգտագործողի Հաշվառման Հաշվի համալրում (լիցքավորում),

3 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

3.1 Սույն պայմանագրով սահմանվում է Թողարկողի կողմից Օգտագործողներին հետևյալ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պայմանները և կարգը.

- էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում),
- էլեկտրոնային փողով վճարման իրականացում,
- էլեկտրոնային փողի մարում,
- էլեկտրոնային փողի փոխարկում,
- էլեկտրոնային փողի փոխանցում:

3.2 Մատուցվող Ծառայությունների համար սահմանված միջնորդավճարների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Թողարկողի սպասարկման կետերում, ինտերնետ կայքում, ինչպես նաև համապատասխան հրահանգի միջոցով տեղեկացման ձևով՝ յուրաքանչյուր գործարք կատարելուց առաջ:

Ծառայությունների տեսակները, դրանց մատուցման եղանակները, հնարավոր գործառնությունները, ժամկետները հրապարակվում են Թողարկողի ինտերնետ կայքում և ներկայացվում են Թողարկողի սպասարկման կետերում:

3.3 Օգտագործողների սպասարկումը իրականացվում է 24/7 ռեժիմով: Պայմանագրով սահմանված գործողությունները, որոնք չեն իրականացվում ավտոմատ եղանակով, Թողարկողի կողմից իրականացվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված աշխատանքային օրերին՝ ժամը 09:30-ից մինչև 17:30-ը:

3.4 Համակարգում Օգտագործողների հետ հաշվարկները կատարվում են ՀՀ դրամով:

4 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Էլեկտրոնային փողերի Հաշվառման հաշիվ կարող է բացվել Թողարկողի ինտերնետ կայքի և Տերմինալների միջոցով, Սպասարկման կետեր այցելելով՝ որտեղ նախօրոք ներկայացվում է Թողարկողի և Օգտագործողի կողմից կնքվող պայմանագիրը: Պայմանագրին հավանություն տալուց հետո միայն Օգտագործողի համար բացվում է Էլեկտրոնային փողերի Հաշվառման հաշիվ:

4.2. Թողարկողը, կախված Օգտագործողի կողմից նույնականացման գործընթացը անցած լինելու կամ անցած չլինելու փաստից օգտագործողին տրամադրում է՝

- չնույնականացված հաշվառման հաշիվ (Օգտագործողը չի անցել նույնականացման գործընթացը)
- նույնականացված հաշվառման հաշիվ (Օգտագործողը անցել է նույնականացման գործընթացը)

4.3. Թողարկողի Սպասարկման կետերում Հաշվառման հաշիվը բացվում է Օգտագործողին նույնականացնելուց հետո և տվյալ Օգտագործողի համար Համակարգում միանգամից բացվում է նույնականացված Հաշվառման Հաշիվ:

Թողարկողի Սպասարկման կետերում չնույնականացված Հաշվառման հաշիվ չի բացվում:

4.4. Ինտերնետ կայքով կամ Տերմինալով բացված Էլեկտրոնային փողերի Հաշվառման հաշվի հավաստումը կատարվում է Օգտագործողի կողմից նախապես մուտքագրված հեռախոսահամարին կամ Էլեկտրոնային փոստի հասցեին հավաստման հրահանգ ստանալուց հետո, որին էլ գալիս է համապատասխան Հաշվառման հաշվի տվյալները:

4.5. Թողարկողի ինտերնետ կայքով կամ Տերմինալով գրանցվելիս, առանց Հաշվառման հաշվի նույնականացման, Օգտագործողը իրավունք ունի միայն լրացնել իր անձնական տվյալները, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված կարգով ձեռք բերել մեկանգամյա չվերալիցքավորվող Էլեկտրոնային փող:

4.6. Հաշվի տրամադրման պահ է հանդիսանում Օգտագործողի կողմից Պայմանագրի 8.1 կետով սահմանված վերջին եզրափակիչ գործողությունների կատարումը, որոնք ուղղված են Պայմանագիրը կնքելուն:

4.7. Չնույնականացված Հաշվի նույնականացումը իրականացվում է Պայմանագրի 6-րդ կետով սահմանված եղանակով Օգտագործողի կողմից նախկինում իր մասին լրացված անձնական տվյալները (անուն ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալներ) ճշտությունը հաստատելու միջոցով:

4.8. Չնույնականացված Հաշիվ ունեցող Օգտագործողը իր կողմից ձեռք բերված մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողով Համակարգում կարող է կատարել միայն հետևյալ գործարքները՝

- Կոմունալ ծառայությունների վճարումներ,
- Բջջային ծառայությունների վճարումներ,
- Ինտերնետ կապի և հեռուստատեսության վճարումներ,
- Բանկային և քարտային հաշիվների համալրումներ,
- Վարկերի մարումներ,
- Ապահովագրական վճարումների կատարում,
- Պետության օգտին վճարումներ, որոնք չեն պահանջում վճարողի պարտադիր նույնականացում:
- Առցանց խաղերի և բուքմեյքերիների վճարումներ,
- Այլ վճարումներ, որոնք չեն պահանջում վճարողի պարտադիր նույնականացում:

4.9. Չնույնականացված Օգտագործողի Հաշվատման Հաշվում պահվող մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 200 000 ՀՀ դրամի համարժեքը:

4.10. Վերալիցքավորվող էլեկտրոնային փող ձեռք բերելու համար Օգտագործողը պետք է անցնի նույնականացման գործընթացը և Համակարգում ստանա նույնականացված Հաճախորդի կարգավիճակ:

4.11. Թողարկողի կողմից յուրաքանչյուր Օգտագործողին նույնականացնող Հաշվատման Հաշվում պահվող վերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր Օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից:

4.12 Հաշվին մուտք գործելը և տվյալ Հաշվի օգտագործմամբ ցանկացած գործարքի կատարումը հնարավոր է միայն Օգտագործողին աուտենտիֆիկացումից հետո:

4.13 Հաշվին մուտք գործելու ժամանակ Օգտագործողի աուտենտիֆիկացումը իրականացվում է Թողարկողի ծրագրային ապահովման միջոցով Օգտագործողի ավտորիզացված տվյալների օգտագործման միջոցով:

4.14 Օգտագործողի ավտորիզացված տվյալները (օգտատիրոջ անուն և ծածկագիր) ստեղծվում են Օգտագործողի կողմից ինքնուրույն: Ծածկագիրը կարող է Օգտագործողի կողմից ցանկացած ժամանակ փոփոխվել՝ անսահմանափակ քանակությամբ:

4.15 Օգտագործողը կրում է իր ավտորիզացիոն տվյալների գաղտնիության պահպանման ամբողջ պատասխանատվությունը: Հաշվի հետ կապված ցանկացած գործողություն, որը կատարվել է

պատշաճ ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ, համարվում է կատարված Օգտագործողի կողմից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4.16 Օգտագործողի կողմից իր ավտորիզացիոն տվյալների կորստի դեպքում Թողարկողը հնարավորություն է տալիս Օգտագործողին վերականգնել Հաշվին մուտք գործելու հնարավորությունը հետևյալ եղանակներով՝

4.16.1 Վերականգման ծածկագրի մուտքագրման միջոցով, որը տրամադրվել է Թողարկողի կողմից Օգտագործողի պահանջով՝ հաշվառման հաշվին նախկինում կցված էլեկտրոնային հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

4.16.2 Վերականգման ծածկագրի մուտքագրման միջոցով, որը տրամադրվել է Թողարկողի կողմից Օգտագործողի պահանջով՝ հաշվառման հաշվին նախկինում կցված բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

4.17 Թողարկողն իրավունք ունի սահմանել Հաշվին մուտք գործելու տվյալների վերականգման պայմանները, կախված Օգտագործողի կողմից օգտագործվող Հաշվի տեսակից:

4.18 Թողարկողն իրավունք ունի մերժել Օգտագործողին Հաշվին մուտք գործելու տվյալների վերականգնումը, եթե

4.18.1 Օգտագործողի կողմից Հաշվին մուտք գործելու տվյալների վերականգման համար ներկայացված տվյալները տարբերվում են Թողարկողի մոտ առկա տվյալներից, որոնք նա ստացել է Օգտագործողի նույնականացման ժամանակ,

4.18.2 Չնույնականացված Օգտագործողի կողմից ներկայացված դիմումի ուսումնասիրման արդյունքում չի հաստատվել տվյալ Հաշվի պատկանելիության փաստը տվյալ Օգտագործողին:

4.19 Թողարկողի իրավունք ունի արգելափակել Օգտագործողի Հաշիվը՝

- ՀՀ իրավասու մարմինների նախաձեռնությամբ,
- Օգտագործողի նախաձեռնությամբ,
- Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ սեփական նախաձեռնությամբ,

4.20 ՀՀ իրավասու մարմինների նախաձեռնության գործող Հաշվի արգելափակումը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, համապատասխան լիազորություններ ունեցող իրավասու մարմնի կողմից կայացած որոշման հիման վրա:

4.21 Օգտագործողի նախաձեռնությամբ Հաշվի արգելափակումը իրականացվում է ցանկացած ժամանակ Օգտագործողի կողմից ստացված համապատասխան դիմումի հիման վրա, որը Թողարկողին է ներկայացվել հետևյալ եղանակներով՝

4.21.1 Անձամբ Թողարկողի սպասարկման գրասենյակ համապատասխան անձը հաստատող փաստաթղթերի առկայությամբ դիմելով:

4.21.2 Թողարկողին իր ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ էլեկտրոնային դիմում ներկայացնելով:

4.22 Թողարկողի կողմից Հաշվի արգելափակումը իրականացվում է հետևյալ դեպքերում՝

4.22.1 Օգտագործողի կողմից Պայմանագրով սահմանված Հաշվի օգտագործման պայմանների խախտման մասին Թողարկողի կողմից կասկածանքի առկայության դեպքում:

4. 22.2 Հաշվին չարտոնագրված մուտքի կասկածանքի առկայության դեպքում:

4.22.3 Ոչ ստանդարտ կամ տարօրինակ բարդ սխեմայով կատարվող գործարքների առկայության դեպքում, որոնք բնորոշ չեն Թողարկողի Օգտագործողների համար նմանատիպ գործարքների կատարելիս:

4.22.4 Թողարկողի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջները կատարելու դեպքում:

4.22.5 Տեխնիկական պատճառներով էլեկտրոնային փողի գերաձախսի դեպքում:

4.23 Հաշվի արգելափակումը ենթադրում է Թողարկողի կողմից բոլոր գործառնությունները արգելումը, որոնք կարող են բերել էլեկտրոնային փողի մնացորդի փոփոխմանը:

4.24 Թողարկողի նախաձեռնությամբ Հաշվի արգելափակման դեպքում, արգելափակման ժամկետները կախված են արգելափակման հիմքերից:

4.24.1 Մինչև Օգտագործողի կողմից թույլ տված Հաշվի օգտագործման պայմանների բոլոր խախտումների վերացումը:

4.24.2 Մինչև Թողարկողը վստահ լինի, որ Օգտագործողի Հաշվին չարտոնագրված մուտք տեղի չի ունեցել:

4.24.3 Մինչև Օգտագործողի կողմից համապատասխան բացատրությունների և փաստաթղթերի ներկայացումը կասկածելի գործարք/ներ/ի մասով, որոնք պահանջվել են Թողարկողի կողմից:

4.24.4 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պայմանների համապատասխան:

4.24.5 Մինչև Օգտագործողի կողմից էլեկտրոնային փողի համալրումը այն չափով, որքանով որ անհրաժեշտ է տեխնիկական պատճառներով էլեկտրոնային փողի գերաձախսը մարելու համար:

4.25 Հաշվի օգտագործման պայմանները.

4.25.1 Օգտագործողը պարտավոր է Հաշիվը օգտագործելիս պահպանել ՀՀ օրենսդրությունը, Թողարկողի և երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը:

4.25.2 Օգտագործողը պարտավոր է Հաշիվը օգտագործել անձամբ: Օգտագործողը իրավունք չունի տեղեկացնել կամ որևէ եղանակով երրորդ անձանց տրամադրել իր ավտորիզացիոն տվյալները:

4.25.3 Օգտագործողը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն իր Հաշվի մասին տեղեկությունները գաղտնի պահելու և չարտոնագրված մուտքները բացառելու համար:

4.25.4 Օգտագործողը իրավունք չունի օգտագործել Հաշիվը հակաիրավական գործողություններ կատարելու համար:

4.26 Օգտագործողի կողմից ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ Թողարկողին ուղարկված վճարման կարգադրությունները կամ ծանուցումները Կողմերի համար համարվում են պատշաճ և բավարար Օգտագործողին նույնականացնելու, էլեկտրոնային փաստաթղթի իսկությունը և ամբողջականությունը հաստատելու համար:

4.27 Օգտագործողի ավտորիզացիոն տվյալները Պայմանագրի շրջանակներում հանդիսանում է Օգտագործողի էլեկտրոնային ստորագրությունը:

5 ՀԱՇՎԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ, ՄԱՐՈՒՄԸ, ՓՈՒՍԱԿՈՒՄԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ

5.1 Թողարկողի կողմից թողարկված մեկ էլեկտրոնային միավորը՝ մեկ Tmoney-ն հավասար է մեկ ՀՀ դրամի, որի գործողության ժամկետը սահմանված է անժամկետ:

5.2 Էլեկտրոնային փողերի լիցքավորումը կանխիկ միջոցներով կատարվում է Թողարկողի

Սպասարկման կետերի, Տերմինալների, Գործակալների միջոցով:

Անկանխիկ միջոցներով էլեկտրոնային փողերի լիցքավորումը կատարվում է բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի, ԱրՔա վիրտուալ քարտերի և դրամական փոխանցումների համակարգերի միջոցով:

5.3 Թողարկողի սպասարկման կետերի, տերմինալների և դրամական փոխանցումների համակարգերի միջոցով Հաշվի համալրման համար անհրաժեշտ է նշել Օգտագործողի Հաշվառման հաշվի տվյալները:

Լիցքավորման համար անհրաժեշտ գումարի ընդունումից հետո ձևավորվում է մուտքի օրդեր, որի մեկ օրինակը տրամադրվում է գումարը վճարողին:

Մուտքի օրդերի ձևավորումից հետո Օգտագործողի Հաշվառման Հաշիվը համալրվում է:

5.4 Թողարկողի կողմից կարող են սահմանվել լրացուցիչ վճարովի ծառայություններ՝ կապված Հաշվի համալրման, հաշվից միջոցների ելքագրման, փոխանցման դեպքում Օգտագործողին sms հաղորդագրության միջոցով կամ այլ ձևով տեղեկացնելու համար:

5.5 Գործակալի միջոցով Հաշվառման հաշվի համալրման համար անհրաժեշտ է ֆինանսական կազմակերպություն ներկայացնել Օգտագործողի Հաշվառման Հաշիվը: Գործակալի միջոցով կատարված Հաշվառման Հաշվի համալրումը իրականացվում է Գործակալի հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետում, որը ի գիտություն է հասցվում Օգտագործողին:

Գործակալների ցանկը, որոնց միջոցով հնարավոր է կատարել փոխանցում Հաշվի համալրման համար, ներկայացվում է Թողարկողի ինտերնետային կայքում:

5.6 Բանկի կողմից թողարկված վճարային քարտերի և ԱրՔա վիրտուալ քարտերի համակարգի միջոցով համալրումը կատարվում է սպասարկող բանկի (acquiring bank) միջոցով՝ տվյալ բանկի հետ կնքված պայմանագրով և ԱրՔա վիրտուալ քարտերի համակարգի կանոնակարգերով սահմանված դրույթներին համապատասխան:

5.7 Համալրման այլ եղանակների և սակագների մասին տեղեկությունները տեղադրում է Թողարկողի կայքում:

5.8 Հաշվի մարումը:

5.8.1 Համակարգից էլեկտրոնային փողերի մարման ժամանակ ևս մեկ Tmoney-ն հավասար է մեկ ՀՀ դրամի:

5.8.2 Հաշվի մարում կարող են կատարել միայն նույնականացված Օգտագործողները: Չնույնականացված Օգտագործող հանդիսացող օգտագործողները չեն կարող կանխիկացնել իրենց հաշիվներում առկա էլեկտրոնային փողը:

5.8.3 Հաշվի մարումը կատարվում է հետևյալ կերպ.

- Թողարկողի ինտերնետ կայքի միջոցով ուղարկվում է մարման հրահանգ, որին ի պատասխան Օգտագործողը ստանում է միջոցների մարման ծածկագիր, որը ներկայացվում է Թողարկողի սպասարկման կետ կամ Գործակալին:

- Մարման ծածկագրի և Օգտագործողի անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում, որով տվյալ Օգտագործողը Համակարգում նույնականացվել է, կատարվում է էլեկտրոնային փողի մարում (հաշվում առկա միջոցների բավարար լինելու դեպքում):
- Եթե ուղարկված մարման հրահանգում նախօրոք նշված գումարի չափով գումար առկա չէ Օգտագործողի հաշվին, ապա հրահանգը մերժվում է: Մարման հրահանգը ենթակա չէ մասնակի կատարման:
- Հաշվի մարման հայտը մերժվում է, եթե Օգտագործողի հաշվի մնացորդը 1000 ՀՀ դրամից պակաս է:

5.8.4 Էլեկտրոնային փողերի մարումը կարող է կատարվել նաև Օգտագործողի կողմից նշված բանկային հաշվին մուտքագրելու հրահանգի միջոցով:

5.8.5 Էլեկտրոնային փողերի մարումը կատարվում է միայն Թողարկողի և Գործակալի աշխատանքային ժամերին, իսկ բանկային հաշվին փոխանցելու միջոցով մարման դեպքում՝ 3 (երեք) բանկային օրվա ընթացքում: Օգտագործողի հաշվում առկա էլեկտրոնային միավորների կանխիկացումը իրականացվում է ՀՀ դրամով:

5.8.6 Հաշվից էլեկտրոնային փողի կանխիկացման դեպքում Օգտագործողից գանձվում է միջնորդավճար՝ Թողարկողի գործող սակագներին համապատասխան:

5.8.7 Եթե Օգտագործողը իր Հաշվով 12 ամսվա ընթացքում չի կատարում գործառնություններ և Հաշվում մնացորդ չկա, ապա Թողարկողը իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել Օգտագործողի Հաշիվը, այդ մասին ծանուցելով Օգտագործողին:

5.8.8 Վճարային կամ փոխանցման գործարք կատարելիս Օգտագործողի հաշվից էլեկտրոնային միավորների ելքագրումը կատարվում է իրական ռեժիմում, գործարքի կատարման պահին:

5.9 Էլեկտրոնային փողի փոխարկումը:

5.9.1. Էլեկտրոնային փողի փոխարկումը կատարվում է իրական ժամանակում, ինչը նշանակում է, որ փոխարկման ժամանակ Օգտագործողի հաշվառման հաշվից էլեկտրոնային միավորները առցանց ռեժիմում երլքագրվում են և միանգամից հաշվեգրվում այլ համակարգի նշված հաշվառման հաշվի:

5.9.2. Էլեկտրոնային փողի փոխարկման համար Օգտագործողի կողմից պետք է հստակ նշվի այն համակարգի անվանումը, որի հետ կատարվում է փոխարկման գործարքը, ինչպես նաև տվյալ համակարգում գրանցված հաշվառման հաշիվը, որին փոխարկման արդյունքում պետք է հաշվեգրվեն համապատասխան միավորները:

5.9.3. Էլեկտրոնային փողի փոխարկման համար Համակարգի կողմից կարող է սահմանվել միջնորդավճար, որը ի գիտություն է հասցվում Օգտագործողին գործարքը կատարելուց առաջ:

5.9.4. Էլեկտրոնային փողի փոխարկումը արտասահմանյան Համակարգերի կողմից թողարկված էլեկտրոնային փողով կատարելու դեպքում, փոխարկման համար Թողարկողի կողմից սահմանվում է փոխարկման փոխարժեք, որը ի գիտություն է հասցվում Օգտագործողին գործարքը կատարելուց առաջ:

5.10 Օգտագործողը կարող է ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել իր հաշիվը, այդ մասին Թողարկողին իր ավտորիզացիոն տվյալների օգտագործմամբ էլեկտրոնային դիմում ներկայացնելով:

5.11 Պայմանագիրը լուծվում և Հաշիվը փակվում է Օգտագործողի դիմումը Թողարկողի կողմից ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

30 օրվա ընթացքում Օգտագործողը կարող է ետ կանչել իր կողմից ներկայացված դիմումը և դադարեցնել Պայմանագրի լուծման և հաշվի փակման գործընթացը:

6 ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՆՈՒՑՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6.1 Օգտագործողների նույնականացումը կատարվում է հետևյալ տվյալների հիման վրա՝

- Անուն, ազգանուն
- Անձնագրային, փախստականի ճամփորդական փաստաթղթի կամ նույնականացման քարտի տվյալներ
- Բջջային հեռախոսահամար
- Էլ. փոստի հասցե
- Հաշվի ավտորիզացիոն տվյալներ

6.2 Օգտագործողի նույնականացումը իրականացվում է հետևյալ կերպ.

6.2.1 Համակարգում նույնականացված Հաշվառման Հաշիվ ստանալու համար Օգտագործողը անձր հաստատող փաստաթղթով (անձնագիր, նույնականացման քարտ, փախստականի ճամփորդական փաստաթուղթ) պետք է այցելի Թողարկողի Սպասարկման կետ, ներկայացնի համապատասխան դիմում-հայտ կամ նույնականացման քարտ կարդացող սարքի միջոցով մուտքագրելով իր նույնականացման քարտի տվյալները և ծածկագիրը (PIN, POOK), իր էլեկտրոնային ստորագրությամբ հավաստի իր մուտքագրված տվյալների ճշտությունը և ստանա նույնականացված Օգտագործողի կարգավիճակ,

6.2.2. Օգտագործողի նույնականացումը հնարավոր է իրականացնել նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի միջոցով: Վճարային քարտերի միջոցով Օգտագործողների նույնականացման գործընթացը և պայմանները սահմանվում Թողարկողի կողմից:

6.3. Օգտագործողին նույնականացնող տվյալների փոփոխությունը Համակարգում կատարվում է Օգտագործողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

6.4. Համակարգում նույն նույնականացուցիչ տվյալներով չի կարող մեկից ավել Օգտագործող լինել:

7 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. 1 Թողարկողն իրավունք ունի.

7.1.1 Եթե Օգտագործողը նույնականացված չէ, մերժել նրա կողմից կատարվող այն գործառնությունները, որոնք նախատեսված են միայն նույնականացված Օգտագործողների համար:

7.1.2 Մերժել Օգտագործողի գործառնության իրականացումը, եթե նա չի ավտորիզացվել Պայմանագրով սահմանված կարգով:

7.1.3 Մերժել Օգտագործողի գործառնության իրականացումը, եթե Օգտագործողի հաշվում առկա էլեկտրոնային փողի մնացորդը բավարար չէ նման գործառնությունը կատարելու և Թողարկողի կողմից սահմանված միջնորդավճարը գանձելու համար:

7.1.4 Մերժել Օգտագործողի գործառնության իրականացումը, եթե Օգտագործողի կողմից իրականացվող գործառնության կատարումը սահմանափակված է Համակարգի կանոններով և ՀՀ գործող օրենսդրությամբ:

7.1.5 Մերժել Օգտագործողի գործառնության իրականացումը, եթե Օգտագործողի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում նշված տեղեկությունները բավարար չեն տվյալ տիպի գործարքը կատարելու համար կամ նշված տեղեկությունները սխալ են կամ նշված գործառնության կատարումը արգելված է ՀՀ գործող օրենսդրությամբ:

7.1.6 Չկատարել Օգտագործողի կողմից Թողարկողին ներկայացված կարգադրությունները, որոնց համար ներկայացված չեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

7.1.7 Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում արգելափակել Օգտագործողի հաշիվը:

7.1.8 ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջել Օգտագործողից կատարված գործարքների մասով ներկայացնել տեղեկություններ և փաստաթղթեր, ներառյալ վիրտուալ հաշվում առաջացած փողերի ծագման աղբյուրների, կատարված գործարքի հիմքերի և շահառուների մասին:

7.1.9 Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում առանց Օգտագործողի կարգադրության, անակցեպտ կարգով նվազեցնել Օգտագործողի հաշվում առկա էլեկտրոնային փողի մնացորդը :

7.1.10 Միակողմանի կարգով սահմանել և փոփոխել Հաշվով կատարվող գործառնությունների սահմանաչափերը: Տվյալ փոփոխությունների մասին տեղեկությունները հրապարակվում են Թողարկողի կայքում: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում կայքում հրապարակման պահից, եթե Թողարկողի կողմից այլ բան նախատեսված չէ:

7.1.11 Իրականացնել համակարգի արդիականացում և ինտերֆեյսի փոփոխություններ:

7.1.12 Ցանկացած ժամանակ միակողմանի փոփոխել համակարգի օգտագործման պայմանները:

7. 2 Օգտագործողը իրավունք ունի.

7.2.1 Օգտվել Թողարկողի կողմից մատուցվող ծառայություններից Պայմանագրի պայմանների համապատասխան:

7.2.2 Ստանալ տեղեկություններ առաջարկվող ծառայությունների և դրանց սակագների վերաբերյալ:

7.2.3 Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան ստանալ տեղեկություններ իր Հաշվով կատարված գործառնությունների մասին:

7.2.4 Թողարկողին ներկայացնել դիմումներ և բողոքներ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7.2.5 Թողարկողից ցանկացած ժամանակ պահանջել մարել կամ այլ կերպ տնօրինել իր Հաշվի մնացորդը:

7.3 Թողարկողը պարտավոր է.

7.3.1 Ապահովել համակարգի անխափան աշխատանքը:

7.3.2 Իր հնարավորությունների սահմաններում ձեռնարկել միջոցների Օգտագործողների հաշիվներին չարտոնագրված մուտքերը կանխելու համար:

7.3.3 Տեղեկացնել Օգտագործողին հաշվով կատարված գործառնությունների մասին:

7.3.4 Պահպանել Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը:

7.4 Օգտագործողը պարտավոր է.

7.4.1 Չտրամադրել և որևէ կերպ չհաղորդել երրորդ անձանց իր ավտորիզացիոն տվյալները:

7.4.2 Թողարկողին ներկայացնել ճշգրիտ և վավեր կոնտակտային տվյալներ:

7.4.3 Նույնականացված Օգտագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացնել նույնականացման համար արժանահավատ տվյալներ:

7.4.4 Անձնական կամ կոնտակտային տվյալների փոփոխման ժամանակ 5 հինգ աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողին ներկայացնել նոր տվյալները:

7.4.5 Թողարկողին տրամադրել Պայմանագրի շրջանակներում պահանջված տեղեկությունները և փաստաթղթերը:

7.4.6 Հասանելի կապի միջոցներով /Թողարկողի զանգերի կենտրոն, էլ. փոստ/ Թողարկողին անմիջապես տեղեկացնել իր Հաշվի վերաբերյալ որևէ անհապատասխանություններ, սխալներ կամ չարտոնագրված մուտքեր հայտնաբերելու դեպքում:

7.4.7 Կատարել Պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

8 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1 Պայմանագրի ակցեպտավորում է համարվում Օգտագործողի կողմից կատարված հետևյալ գործողությունները՝

- Հաշվի գրանցման հայտը լրացնելը,
- Պայմանագրի պայմաններին ծանոթացումը և գրացման բլանկի համապատասխան վայրում Պայմանագրի պայմանների հետ համաձայն լինելու մասին նշում կատարելը:

8.2 Պայմանագրի ակցեպտավորումը նշանակում է Պայմանագրի բոլոր պայմանների լրիվ և անվերապահորեն ընդունումը առանց որևէ բացառությունների կամ սահմանափակումների, և հավասարազոր է գրավոր կնքված պայմանագրին:

8.3 Պայմանագրի պայմանների ակցեպտավորման ժամկետները սահմանափակ չեն:

8.4 Պայմանագիրը կնքվում է անժամկետ:

9 ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Պայմանագրի շրջանակներում խնդիրներ կամ անհամապատասխանություններ առաջանալու դեպքում Օգտագործողը կարող է Թողարկողին ներկայացնել բողոք-պահանջ:

9.2 Օգտագործողների բողոք-պահանջները ընդունվում են՝

ա) բանավոր (այդ թվում հեռախոսով) գանգահարելով Ընկերության թեժ գծի հեռախոսահամարով, այն է՝ 60 27 22 22 կամ,

բ) գրավոր, այդ թվում՝

- առձեռն (հանձնելով գրությունը Ընկերության Գործունեության վայրում),
- փոստով (ուղարկելով Ընկերության գործունեության վայրի փոստային հասցեով),
- էլեկտրոնային եղանակով (Ընկերության տեղադրված էլեկտրոնային հասցեի

պաշտոնական կայքի (www.telcell.am) կամ էլեկտրոնային փոստի միջոցով):

9.3 Օգտագործողների բողոք-պահանջների քննարկումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և Թողարկողի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

9. 4 Թողարկողի կողմից հաստատված «Հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման և քննության» կարգը հրապարակվում է <http://tel-cell.am/am/users/prava/> հասցեով:

10 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

10.1 Կողմերը պարտավորվում են չհրապարակել Պայմանագրի շրջանակներում ստացած տեղեկությունները, որոնք համարվում են գաղտնի՝ Կողմերից յուրաքանչյուրի համար:

10.2 Թողարկողը պարտավորվում է ապահովել Օգտագործողի ավտորիզացիոն տվյալների, հաշվի մնացորդի, էլեկտրոնային փողերով կատարված գործարքների մասին տեղեկությունների, Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը: Նշված տեղեկությունները կարող են հրապարակվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման համար, կամ անհրաժեշտ է Թողարկողի խախտված իրավունքի պաշտպանության համար: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Օգտագործողի համաձայնությամբ կամ կարգադրությամբ: Թողարկողն իրավունք ունի որևէ վճարում ստացող անձին բացահայտել նրան վճարում կատարած անձի անձնական տվյալները և վճարման գործարքին վերաբերող մանրամասնությունները:

10.3 Պայմանագրի շրջանակներում գաղտնի չեն համարվում այն տեղեկությունները, որոնք Կողմերը կարող էին ստանալ օրինական ճանապարհով այլ աղբյուրներից, առանց գաղտնիության պայմանների խախտման:

10.4 Օգտագործողի կատարված գործարքների մասին տեղեկությունները պահպանվում են Պայմանագիրը լուծելուց հետո 5 տարի ժամկետով:

11 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

11.1 Կողմերն ազատվում են իրենց պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու պատասխանատվությունից, եթե այն հանդիսացել է անհաղթահարելի իրավիճակների հետևանք՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, կապուղիների /ինտերնետ, հոսանք/ խափանում և Կողմերի

հսկողությունից դուրս գտնվող այլ իրավիճակներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից որոշումների, վճիռների և այլ իրավական ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են Կողմերին՝ Պայմանագրով իրենց պարտավորությունների կատարմանը: Ընդ որում Կողմերի վերահսկողությունից դուրս վիճակ է համարվում Թողարկողից անկախ պատճառով կապի խափանման հետևանքով Թողարկողի համակարգի հնարավոր ընդհատումները:

12 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12.1 Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով և չափով:

12.2 Թողարկողը պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով փոստային, ինտերնետ և կապի ծառայությունների խափանման, ինչպես նաև Օգտագործողի կոնտակտային տվյալների փոփոխման համար, ինչի պատճառով Օգտագործողը ժամանակին չի ստացել ծանուցում:

12.3 Թողարկողը պատասխանատվություն չի կրում կապի, հոսանքի, ծրագրային ապահովման և այլ տեխնիկական խափանումների համար, ինչի պատճառով Թողարկողը հնարավորություն չի ունեցել կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

12.4 Թողարկողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց Օգտագործողի հաշվով կատարված գործարքների և/կամ ավտորիզացիոն տվյալների հայտնի դառնելու համար, եթե դա տեղի է ունեցել հաշվի օգտագործման ժամանակ կապուղիների գաղտնալսելու և/կամ տվյալների առևանգման հետևանքով:

12.5 Թողարկողը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի կողմից իր ավտորիզացիոն տվյալները երրորդ անձանց տրամադրելու համար:

12.6. Հաշվի կառավարման վավերապայմանների կորստյան դեպքում, ինչպես նաև դրանց երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքում, Օգտագործողը պարտավոր է Թողարկողի կողմից սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել Թողարկողին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Օգտագործողը կրում է դրանց չարտոնված օգտագործման անբարենպաստ հետևանքների ռիսկերը, այդ թվում՝ կրում է պատասխանատվություն Թողարկողին պատճառոված վնասների համար:

13 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

13.1 Օգտագործողը երաշխավորում է, որ Պայմանագրի պայմանները իր համար հասկանալի են և ամբողջությամբ ու անվերապահորեն ընդունելի:

13.2 Օգտագործողը երաշխավորում է, որ չի օգտագործելու իր հաշիվը անօրինական գործողություններ կատարելու համար:

13.3 Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության պայմաններով սահմանված կարգով՝ անկախ Օգտագործողի գտնվելու վայրից:

14. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ

«ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ 02703102,

«Յունիքանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Հ/հ 24100205704000

Վեբ-կայք՝ www.telcell.am

Հեռ.՝ +374 (60) 27-22-23

Թեժ Գիծ՝ +374 (60) 27-22-23